Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018թ.
սեպտեմբերի 19-ի N1230-Ն
որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **526-Ա**
3. Անունը, ազգանունը,զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ **Բելգիայի Թագավորություն՝ քաղաք Բրյուսել**
5. Գործուղման ժամկետները՝ **25.06.2025-29.06.2025թթ.,**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցների հաշվին**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը _____
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☑ ա.փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Էդուարդ Հակոբյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	573,402.00	**573.40**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	EUR 206.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	93,742.36	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	374,969.00	**374.97**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	EUR 126.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	57,337.56	
	Օրերի քանակը	5	
	Ընդամենը (դրամ)	286,687.00	**286.69**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		-
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**1,235.06**	**1,235.06**

Գլխավոր ֆինանսիստ _____ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ 02.07.2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. հունիսի 25-ից 29-ը ք. Բրյուսել (Բելգիայի Թագավորություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Էդուարդ Հակոբյան – ՀՀ ՊԵԿ նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, 2025թ. հունիսի 25-ից 29-ը

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Էդուարդ Հակոբյանի գլխավորած պատվիրակության մասնակցությունն էր Համաշխարհային մաքսային կազմակերպության Խորհրդի 145-րդ և 146-րդ նստաշրջաններին, ինչպես նաև երկկողմ հանդիպումներին մասնակցությունը Եվրահանձնաժողովի Հարկման և մաքսային միության գլխավոր վարչության (DG TAXUD) և Ընդլայնման և Արևելյան հարևանության գլխավոր վարչության (DG ENEST) ներկայացուցիչների հետ:

Համաշխարհային մաքսային կազմակերպությունը մաքսային հարցերով զբաղվող միակ միջազգային կազմակերպությունն է, որն ունի գլոբալ անդամակցություն և համարվում է մաքսային ոլորտում միջազգային ստանդարտների ու գործիքների մշակման առանցքային հարթակ: Հայաստանի Հանրապետությունը ՀՄԿ լիիրավ անդամ է 1992 թվականից և ՀՄԿ-ի հետ համագործակցում է տարբեր ուղղություններով ու ձևաչափերով, այդ թվում՝ ՀՄԿ աշխատանքային հանդիպումներին ու կոմիտեներին ներգրավվածության միջոցով:

ՀՄԿ շրջանակում գործող բարձրագույն որոշում կայացնող մարմինը՝ Խորհուրդը, գումարվում է տարին մեկ անգամ՝ անդամ պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների մակարդակով: Խորհրդի նստաշրջաններին հաստատվում են ՀՄԿ կոմիտեների տարեկան հաշվետվությունները, տարեկան ռազմավարական պլանը, նախանշվում են կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները, ֆինանսական կառավարման ու աուդիտի մասով հաշվետվությունները, ինչպես նաև տեղի են ունենում ՀՄԿ տարբեր մարմինների ընտրություններ:

ՀՀ ՊԵԿ նախագահի գլխավորությամբ պատվիրակության մասնակցությունը ՀՄԿ խորհրդի նստաշրջաններին ու հարակից հանդիպումներին կարևոր էր, քանի որ թույլ տվեց մասնակցել ՀՄԿ Խորհրդում որոշումների կայացմանը ինչպես նոր ստանդարտների ու գործիքների հաստատման առումով, այնպես էլ գործունեության հիմնական ուղղությունների նախանշման, ռազմավարական պլանի սահմանման ու ֆինանսական կառավարման առումով: Մյուս կողմից, մասնակցությունը հնարավորություն տվեց ծանոթանալ ՀՄԿ կողմից առաջարկվող նոր ծրագրերին, ՀՄԿ եվրոպական տարածաշրջանում քննարկվող հարցերին, մասնակցել ՀՄԿ Խորհրդի ղեկավարի ու ՀՄԿ այլ մարմինների ընտրություններին: Հարկ է նշել նաև, որ հանդիպումների շրջանակում ընդլայնվել են նաև միջազգային կապերը, ձեռք են բերվել մի շարք երկկողմ պայմանավորվածություններ:

Այցի շրջանակում տեղի են ունեցել հանդիպումներ նաև Եվրահանձնաժողովի Հարկման և մաքսային միության գլխավոր վարչության (DG TAXUD), ինչպես նաև Ընդլայնման և Արևելյան հարևանության գլխավոր վարչության (DG ENEST) ներկայացուցիչների հետ: Այս հանդիպումներն ուղղված էին մաքսային ոլորտում բարեփոխումների, միջազգային համագործակցության և ինստիտուցիոնալ կարողությունների ու գործընթացների զարգացման աջակցությանը ԵՄ հետ փոխգործակցության շրջանակում, հատկապես՝ ԵՄ չափանիշների և լավագույն փորձի տեղայնացման հեռանկարով:

5. Քննարկված թեմաները՝

Նստաշրջանների ընթացքում քննարկվել են ՀՄԿ տեխնիկական հարցերով կոմիտեների, ինչպես նաև Աուդիտի և Ֆինանսական կոմիտեների ու Քաղաքականության հանձնաժողովի տարեկան հաշվետվությունները, որոնք հաստատվել են ՀՄԿ Խորհրդի կողմից: Քննարկվել են

նաև ընթացիկ ֆինանսական տարում ՀՄԿ ռազմավարական պլանի կատարողականը և հիմնական ուղղությունները, ինչպես նաև հաստատվել է հաջորդ ֆինանսական տարվա ռազմավարական պլանը:

Եվրահանձնաժողովի Հարկման և մաքսային միության գլխավոր վարչության (DG TAXUD), ինչպես նաև Ընդլայնման և Արևելյան հարևանության գլխավոր վարչության (DG ENEST) ներկայացուցիչների հետ հանդիպման շրջանակներում քննարկվել են ԵՄ-ի կողմից ՊԵԿ-ին հնարավոր տեխնիկական ու ֆինանսական աջակցության տրամադրման շրջանակները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության Խորհրդի 145-րդ և 146-րդ նստաշրջանների ընթացքում ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանը հանդես է եկել ելույթներով՝ ընդգծելով ՀՄԿ տեխնիկական աջակցության կարևորությունը մաքսային գործառնությունների կատարելագործման, մաքսային բարեփոխումների առաջնահերթությունների նախանշման, կարողությունների զարգացման և լավագույն փորձի տեղայնացման առումով:

ՊԵԿ նախագահը հանդիպում է ունեցել նաև ՀՄԿ գլխավոր քարտուղար Յան Սոնդերսի հետ, որի շրջանակներում անդրադարձ է կատարվել ՀՄԿ աջակցությամբ ՀՀ-ում վերջին շրջանում իրականացված, ինչպես նաև հաջորդ ֆինանսական տարում իրականացվելիք տեխնիկական աջակցության ՀՄԿ ծրագրերին: ՊԵԿ նախագահն ընդգծել է ՀՄԿ-ի խելացի ռիսկերի կառավարման համակարգերի բարելավման ու հակակոռուպցիոն ծրագրերում ՀՀ ՊԵԿ-ին ներգրավելու կարևորությունը, ինչպես նաև առաջարկել է դիտարկել ՀՄԿ որևէ համաշխարհային համաժողով Հայաստանում անցկացնելու հնարավորությունը:

Եվրահանձնաժողովի Հարկման և մաքսային միության գլխավոր վարչության (DG TAXUD) ու Ընդլայնման և Արևելյան հարևանության գլխավոր վարչության (DG ENEST) ներկայացուցիչների հետ հանդիպումների շրջանակներում կողմերը քննարկել են ԵՄ աջակցությամբ ՀՀ մաքսային ոլորտի բարեփոխումների և ինստիտուցիոնալ զարգացմանն ուղղված համագործակցության ամրապնդման ու խորացման վերաբերյալ հարցեր՝ տեխնիկական ու ֆինանսական հնարավոր աջակցությունների շրջանակում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նստաշրջանների ընթացքում ՀՄԿ Խորհրդի կողմից հաստատվել են ՀՄԿ տեխնիկական հարցերով կոմիտեների, ինչպես նաև Աուդիտի և Ֆինանսական կոմիտեների ու Քաղաքականության հանձնաժողովի տարեկան հաշվետվությունները:

ՀՄԿ Խորհրդի նստաշրջանների ընթացքում տեղի են ունեցել նաև Խորհրդի նախագահողի, փոխնախագահների, ինչպես նաև համապատասխան կոմիտեների ղեկավարող ու անդամ երկրների ընտրություններ:

Այցի շրջանակներում պայմանավորվածություններ են ձեռք բերվել նաև Եվրահանձնաժողովի Հարկման և մաքսային միության գլխավոր վարչության (DG TAXUD), Ընդլայնման և Արևելյան հարևանության գլխավոր վարչության (DG ENEST) ներկայացուցիչների հետ՝ տրամադրվող հնարավոր տեխնիկական ու ֆինանսական աջակցության ծրագրերի մասով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ծանոթանալ համաշխարհային մակարդակում մաքսային գործի զարգացումներին, ՀՄԿ կողմից առաջարկվող նոր գործիքներին և ստանդարտներին, որոնք մաքսային համակարգում կկիրառվեն ինչպես ընթացիկ բարեփոխումների շրջանակներում, այնպես էլ մաքսային ծառայողների կարողությունների շարունակական զարգացման գործընթացում:

Հանդիպման շրջանակում ընդլայնվել են միջազգային կապերը, ձեռք են բերվել երկկողմ պայմանավորվածություններ:

ՀՄԿ գլխավոր քարտուղարի հետ հանդիպման շրջանակում նախանշվել են առանձին ծրագրեր, որոնց մասով առաջիկայում համագործակցությունը կշարունակվի: Միաժամանակ, հանդիպմանը ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում առաջիկայում կքննարկվի ՀՄԿ որևէ գլոբալ համաժողով ՀՀ-ում անցկացնելու հնարավորությունը:

Եվրահանձնաժողովի մարմինների հետ երկկողմ հանդիպումները հնարավորություն ընձեռեցին քննարկել ՀՀ–ԵՄ մաքսային ոլորտում երկուստեք առաջնային կարևորության օրակարգային հարցեր, ներկայացնել ԵՄ աջակցությամբ ՀՀ մաքսային ծառայությունում

իրականացվող տեխնիկական ու ֆինանսական աջակցության ծրագրերի ընթացքի վերաբերյալ թարմացումներ, ձեռք բերել նոր պայմանավորվածություններ և նախանշել համագործակցության նոր հեռանկարներ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Էդուարդ Հակոբյան

02.07.2025թ.